է Աւագ նկարիչ, որ թէև Գլաձորում գրելու մասին յիշատակութիւն չկայ, բայց այնտեղ է ուսում ստացել և այնտեղ պիտի օրինակած լինի մեզ յայտնի նորա հնագոյն գործը, որ մի աւետարան է (Երեւան, թանգ. № 99, 349բ). «Ցիշեցէք ի Քս. աղաչեմ ըզ-զանապատս ի բարեաց զԱւագ գպս. (գպիրս), որ զսբ. աւետարանս ցանկագրեցի մեծ սիրով ի յընդիր օրի-նակէ մեծ վրին. Եսայեա...»։ Գրուած է թղթի վե-րայ, բոլորգրով, ՉՀԸ թուին, որ հաշուած է Քրիս-տոսի «ի ՌԴՃԼԲ ամն», նկարազարդուած խորաններ-ով և տէրունական պատկերներով. ստացողն է սմն Ասլան, որի պատկերը նկարուած է Աւագի պատկերի հետ Հոգեգալստեան մանրանկարին կից։ Երկրորդ մեզ յայտնի գործը Բեշկին Օրբելեանի համար գրուած ա-ւետարանը, զարդարուած աւելի բազմաթիւ, բովան-դակութեան հետ կապուած մեծ ու փոքր մանրանկար-ներով և զարդերով. «ի բռնակալութե. ազգին Նե-տողաց՝ Կարճակեցին Արփայի (1335 թ.) և յիշխանու-թե. զօրացելոյ յիւ. և փառաց ի փառս բարձրացելոյն կրկին կենօք և աշխարհօք մեծ իշխանաց իշխանին պարոն Բուրթելին, հօր վերասացեալ զարդու զաւա-կին Պեշգենին, ստացողի ՅԱծային գանձուս։ Եւ ի վե-րատեսչութե. եպիսկոպոսութե. տն. Սարգսի մետ(ր) ապօլտի։ Ի դպրապետութե. մեծ հռետորին Եսայեա»։ Երրորդ գործն է հէնց սոյն Սարգիս մետրապօլտի հա-մար գրած երգարանը կամ Խազգիրքը, նուրբ մագա-ղաթի վերայ, բոլորգրով, որ գտնուում է Բերլինի աբ-քայական մատենադարանում։ Թուագրուած է «յաշ-խարհակալ զանութեան սուլթան Մահմուտին (1336–1338) . . . Եւ ի լուսաւոր վարժապետութե. մեծին Եսայեա», ՉՉՉ = 1337։ Ձեռագրի սկզբում երկու մանրանկար կայ, մէկը վեղարով, «տէր Ներսէս երդող» (Շնորհալին), միւսը եպիսկոպոսական կարճ խոյրով, որ ստացող Սարգիս եպիսկոպոսն է (*)։

Մի տարի յետոյ յիշում է մեր Աւագին Մխիթար Անեցին, ոչ ժամանակագիրը, իրրև իւր Աստուածա-շնչի զարդարման օժանդակող.

Պատկեր 220.

Մեծ օժրնդակ այսմ գործին
արի և քաջ քարտուղարին
ւ՚անհամեմատ նրկարաւղին
շնորհաց Աւագ սարկաւագին։

Մխիթար Անեցու ձեռագիրը թուագրուած է. «Ցեսթն Ճ. ւ Ջ. թվին։ և Է. երորդ աւելորդին. աշ-խարհս հայնց է ի վշտին, որպէս պատմեն վս. նեռին։

չեցեալ, կամօք և ձեռնտուութեամբ սորին» գրել է մի նարեկ։ Ձեռ. Էջմ. № 569 նժ (Աղթամարից) սքանչելի բոլորգրով, 131բ. «Գրեցաւ մեկնութիս. հրահանգ բանիցն Յոբա իմով ձեռամբ մեղապարտ սպասաւորի Գր. ի վայելս անձին իմոյ և յիշատակ հոգւոյ իմում և ծնողաց և վարժապետաց Մխի-թարա և Տիրատրոյ, արդ որք հանդիպիք աւգտութիւ. ինչ, յաղաւթս յիշեսջիք. ի թուի ՊԲ» (= 1353)։ Նոյնպէս Լիմից բերուած № 478 ձեռագրի յիշատակարանի մէջ. «Զոգնաղիմի որսացեալս ի ծուղակս կենակորոյս գոռոզին զՅոհ. սպասա-ւորի բանի բարի կամաւք յիշել աղաչեմք հանդերձ ծնողաւք և համազգայնօք։ Ընդ նմին զտիեզերալուր վարժապետն մեր զՏիրատուր, որ փայլէր ի ժամանակին իւրում իբրև զարե-գակն (նշանագրով) ի մէջ աստեղաց (նշանագրով). թիւ ՊԻԱ» (= 1372)։ Այս թուին, ուրեմն, մեռած էր Տիրատուրը։

Նա թաղուած էր Հերմոնի վանքում Էջմ. ի № 1241/1128, 384, յիշատակարանի համեմատ. «Գրեցաւ տխեղծ մատամբ Յովհաննէս պիտակ պտի. (վարդապետի ?) ի թվս. ՊԿԴ (= 1415) ի վանքս Հերմոնի, առ դրան սբ. Լուսաւորչին և սբ. դամբարանաց սբ. վրդց. Տիրատրոյ, Գրիգորի. և այլոց»։ Հերմոնի վարժապետներն էին Տիրատուրից և սորա աշ-ակերտ Գրիգորից յետոյ Սարգիս, ապա Յովհաննէս Կոլոտիկ, որ մանակից եղաւ աթոռի փոխադրութեան։ Սարգսի աշ-ակերտն էր նաև Աւագտէր Սպիտակաւոր Աստուածածնի վար-դապետը և գրիչը (Խաղբ. Ա. 231–236)։ Հերմոնի գրիչներից յայտնի է Գրիգոր և նկարիչներից Եսայի։

(*) Verzeichniss der armenischen Handschriften. Dr. N. Karamianz, 1888, Berlin. երես 26։ Մենք օգտուել ենք բուն ձեռագրից, որ յետոյ սեպհականութիւն էր Մանուէլ եպիս-կոպոս Ազիբէկենցի։